ՐՈԲԵՐՏ ԿՈԽԻ ԳԻՒՏԻ ՄԱՍԻՆ

ՊՐՈՒՍ. ՄԻՆԻՍՏՐ ԳՈՍԼԵՐԻ ՃԱՌԸ

Մեր ընթերցողներից շատերը կարող էին կարծել, որ «Մուրճ»-ի անցեալ 1890 թ. № 12-ում տուած լուրի տեղեկութիւնները Կոխի գիւտի մասին կարող էին սպառած լինել հասարակութեան հետաքրքրութիւնը այդ խնդրի մասին։ Բայց «Մուրճ»-ի տուած զեկուցումներից պակաս էր մի շատ կարևոր ճառ, որ կարդացել էր Պրուսիայի լուսաւորութեան մինիստր Ֆոն Գոսլեր՝ Կոխի գիւտի մասին։ Մենք գտնում ենք, որ այդ ճառի մէջ, կարդացուած պրուսական պատգամաւորների ժողովում 29 նոյեմբերի (նոր տոմար), շոշափուած են այնքան կարևոր խնդիրներ, որ անկարելի է չետ կանգնել ցանկութիւնից՝ այն հաղորդել այս ամսագրի ընթերցողներին, անդամ եթէ շատերը, առաջին անգամից, մեղադրելու լինեն մեզ, թէ մենք վերադառնում ենք արդէն գոցուած մի խնդրին։ Մենք սակայն ապահով ենք, որ ընթերցողները այլ եզրակացութեան կը գան, եթէ ուշադրութեամբ հետեւելու լինեն պրուսական մինիստրի այս ճառին, որից մենք կ'աշխատենք մեզ համար անկարևոր տեղերը ըստ կարելոյն կրճատել։

«Ես չիշեցնում եմ Ձեզ 4-ն օգոստոսի, երբ պրոֆ. Կոխը իւր դասախօսութիւնը նորանով վերջացրեց, որ նա միանգամայն կարելի և հաւանական է գտնում, որ տուբերկուլ-բացիլների դէմ կռուելու միջոցի գիւտից կարողանայ օգտուել գործնական բժշկականութիւնը։ Նա ասաց, որ սխալ են գործել, երբ ցանկացել են տուբերկուլ-բացիլի դէմ ուղղակի միջոցներով կռուել, քանի որ տրամաբանութիւնը պէտք է թելադրէր մի այլ ճանապարհ, այն է՝ կռուել տուբերկուլ-բացիլների դէմ մարմնից դուրս, որոնք արհեստական հողի վերայ լինեն զոյացրած, երկրորդ՝ փորձեր անել մարդու վերայ։ Կոխը յայտնել էր, որ նա միջոցներ էր գտել տուբերկուլ-բացիլների դէմ կռուել մարմնից դուրս, բայց որ այդ միջոցները անզօր են նոցա սպանել անասունների և մարդու մարմինների մէջ։ Յետոյ Կոխը վերջացրեց իւր առ միշտ անմոռանալի զեկուցումը նրանով, որ նրան

այնուամենայնիւ յաջողել է անասունների վերայ փորձեր անելիս՝ մի նիւթ գտնել, որը կենդանուն ազատ է պահում տուբերկուլ-բացիլներից և թէ ընդունակ է հիւանդութեան զարգացման դէմն առնել։

Կոխի այս յայտարարութիւնը ներգործեց ամբողջ լուսաւորեալ աշխարհում որպէս որոտման հարւած և այդ բոպէից ի հարկէ ուշադրութիւնը լարւեց դէպի Կոխի անձնաւորութիւնը։ Բայց նա վիճաբանութիւններից իսկոյն հեռացաւ, չտապելով Բերլինից դուրս դալ ճանապարհորդութեան՝ մինչև բժշկական կոնդրեսի վերջանալը։ Անմիջապէս դորանից յետոյ նա բոլորովին գաղտնի կերպով առաջին փորձը արաւ ոչ միայն մի անասունի, այլ և մի մարդու վերայ։ Ամենից առաջ նորա դեղը գործադրւեց «Charité» հիւանդանոցում պրոֆ. Ֆրենցել'ի և շտաբի բժիշկ Կոհլեր'ի օգնութեամբ։ Յետոյ նա արաւ արդէն հռչակւած փորձը իւր անձի վերայ և ներգործութիւնը այնքան սասիկ էր, որ միմիայն նորա նման համոզւածը և վճռւածը կարող էր անել, քանի որ այն փորձը կարող էր նորան անմիջապէս մեռցնել։ Նա ընդունել էր 5 խորանարդ գրամի չափ, ուրեմն ամենաշատը, ինչ նա տւել էր Շարիտէ'ի հիւանդներից որ և է մէկին։ Յետոյ նա դիմեց պրոֆ. Բրիգեր'ին, որը յայտնի է որպէս մի նշանաւոր և լուսալի հետազօտող և աշխատում է առողջաբանական ինստիտուտում և իւր աշխատութիւններով տեղական փառք է ձեռք բերած։ Բրիգեր'ի միջոցով նա ծանօթացաւ դր. Լեի'ի մասնաւոր կլինիկի հետ։ Կոխը վկայել է դր. Լեի'ի կատարեալ անշահախնդիր ծառայութիւնները։ Ես պարտաւոր եմ նաև լիշատակելու, որ այնտեղի հիւանդները վճարում են օրական 1 մարկ 75 ֆենիդ (մօտ 60 կոպ. ոսկի), ուրեմն նոյնը, ինչ վճարում է «Շարիտէ» հիւանդանոցում։ Մինչև անդամ դր. Կոխի ցանկութեան համաձայն՝ յաջողւել է նաև մի նախկին ուսանողի ձրի ընդունել։

Որպէս Կոխի աշխատակից, բացի դոցանից, լրագրերում լիշատակւել է նաև դր. Կորնետ։ Կորնետը յայտնի եղաւ իւր դարագլուխ կազմող հրատարակութիւնով թոքախտ-բարակացաւի մասին, որ ես անցեալ տարի, տէրութեան հաշւով, տպագրել և ցրւել տւի ամենահեռու տեղեր։

Յետոյ որպէս աշխատակից Կոխի լիշել է դոքտ. Դենգել, որը մի ընդարձակ մասնաւոր պրաքսիս ունի և պրոֆ. Պֆուհլ։

Ես պէտք է ընդունեմ, որ այս բոլոր հարդկանց անունների դիմաց հարցական նշաններ չը կան։

Փորձերը չէր կարելի բոլորովին գաղտնի պահել։ լրագրերում մի-մի տեղեկութիւններ կարելի էր կարդալ, որոնք նաև արտասահմանն էին անցնում, և արտասահմանի մամուլից ստանում էինք մենք բաղմաթիւ չարամիտ և աննպաստ դատողութիւններ, որոնք՝ չարախնդրութեամբ պնդում էին, թէ այն, ինչ Կոխը օգոստոսի 4-ին դտել էր այժմ իւր ապակու նման փչրւած է։ Ես համբերութեամբ սպասում էի, մինչև որ գործը ինձ կը հասնի։

Հոկտեմբերի 27 ին պրոֆ. Կոխը ինձ հաղորդեց, թէ նա մի յատուկ միջոց (սպեցիֆիկում) է գտել տուբերկուլ-բացիլի դէմ. Թէ նա գտնում է- որ նա այսուհետև, իւր ընդարձակւած գիտնական աշխատութիւնների պատճառով․ այլ ևս չի կարող առողջաբանական ինստիտուտի նախագահի պաշտօնը շարունակել, և նա դրեց այս խնդիրը, թէ նա արդեօք պէտք է դուրս գայ ինստիտուտից։ Բոլոր այսպիսի դէպքերում, երբ մի նշանաւոր գիտնական ուսուցիչ մտած է նդել մի հետազօտական ասպարէզ, որը նորա ամբողջ ուժն էր պահանջում, ես միշտ պետութեան պարտքն եմ համարել՝ նրան ազատութիւն և միջոցներ տալ (հաւանութիւն լսողների կողմից)։ Նշանաւոր հետազօտողների մի ամբողջ շարք․ բարձրագոյն հաւանութեամբ, ես այդ նպատակով ազատել եմ ծառայութիւնից մի-երկու տարով։ Այսպիսով նաև Կոխին արձակուրդ տուեց և պր. Ֆոն Էսմարխ'ին յանձնեց նորա տեղապահութիւնը.

Դէ արդէն գաղտնիքը բացւեց. բոլոր ջանքերը քօղը դեռ պահպանել՝ ապարդիւն էին։ Կարծես որոտմունքի պայթիւն էր որ դուրս որոտաց այդ ինստիտուտից։ Արձակուրդ տալու օրը իմ խօսակցութիւնը Կոխի հետ աւելի խորը շօշափեց խնդիրը։ Նա հէնց առաջուց պատրաստ էր ինձ ասել վերջին խօսքը, որ նա գիտէր։ Բայց ես նորան խնդրեցի՝ այդ ինձ չ'ասել, որովհետև շատ հեշտ կարող էր պատահել, որ ես առանց իմ մեղքի, տեղեկութիւն տայի, որը գործին աւելի կը վնասէր քան կ'օգնէր։ Որ նա սկզբում իսկ միանգամայն պատրաստ է իւր գործերը հրատարակել, ապացուցում է, որ երբեք նորա հոգու միջով միտք չի անցել, որ գիտնականից և իդէալականից դուրս ուրիշ հիմունք ունենար։ (Հաւանութիւն)։ Մենք խօսակցեցինք այս թեմայի վերայ՝ ինչ կարգադրութիւններ պէտք է անել, որ կարելիութիւն տրւի, որ Կոխը այժմ և թէ ընդ միշտ իւր գիւտի գործադրութիւնը և նորա տարածւելը հարկաւոր ճիւղերի վերայ ապահով է։ Նա կարծում էր որ դորա համար նրան հարկաւոր կը լինի մի հիւանդանոց՝ մի ուրիշ մեծ հիմնարկութեան մէջ, ուր նա բազմաթիւ հիւանդներից կարողանայ այլ և այլ վարակիչ հիւանդութիւնները ուսումնասիրել. յետոյ նա ցանկանում է մի գիտական ինստիտուտ՝ հարկաւոր հետազօտութիւնների համար։ Ես նրան առաջարկեցի «Շարիտէ» հիւանդանոցը. բայց նա կարծեց, թէ աւելի լաւ կը լինէր Մոաբիտի լազարեթում 150 անկողին յանձնէր նրան, քանի որ այնտեղ 400—500 հիւանդներ կան։ Նաև ես առաջարկեցի նրան, որպէս փորձնական դաշտ՝ օգտւել նաև պրուսական համալսարանական կլինիկաներից։ Նա այնքան վստահ էր իւր վերայ, որ այդ առաջարկութիւններից նա չ'օգտւեց, և մենք հեռացանք իրարից՝ առանց վախճանի հանգելու։

Բայց ես գաղափարի յետևից ընկայ։ Անկասկած է, որ երբ պրոֆ. Կոխը ինձ ասում էր թէ նա մի միջոց է գտել՝ այդ ճիշտ էր, բայց այս էլ

մի խնդիր է, որ բանը այն ձևով ներկայացնուի աշխարհքի առաջ, որ գիւտի ամբողջ շահերին ևս համապատասխանէ։ Մեր բոլոր բնագիտական աշխատութիւնները յենւում են գլխաւորապէս համալսարանների վերայ, և մեր պրուսական կլինիկաները ներսում և թէ արտասահմանում այս համբաւն ունին, թէ այնտեղ ստերով չեն զբաղւած և որ այն տեղ միայն այն է հրատարակւում, ինչ իսկապէս լաւ ճանաչւած է։ Պէտք է հեռու կենալ այնպիսի հրատարակութիւններից, ուր փաստերի դիտողութիւնը անցնում է սպեկուլացիային։ Սպեկուլացիայի (շահախնդրութեան) և հետազօտութեան խառնուրդը երբէք չը պիտի տեղ գտնի մեր կլինիկներում։

Յետոյ ես մտածեցի վիրաբուժական կլինիկի մասին. Նորա ղեկավար պրոֆ. Ֆոն Բերգմանի շնորհիւ ինձ յաջողեց, այնտեղ մի մեծ փորձնական հիմնարկութիւն կարգի բերել։ Նոյեմբերի 6-ին արդէն կարելի եղաւ մի չափ հարուստ նիւթ ունենալ, որը տուբերկուլոզի բոլոր ձևերն էր ներկայացնում։ Այնտեղ է աշխարհքիս բժիշկների ժամադիրը. օրական այցելում են այնտեղ հիւանդներին 300 բժիշկ։ Օպերացիաները և ուսումը պէտք է յետ քաշւէին։

Կոխի ցանկութիւնների մասին Բերլին քաղաքի դիմաց՝ Նոյեմբերի 1-ին տեղի ունեցաւ մի կոնֆերենց, բայց դժւարութիւններ յառաջացան. Կոխի ցանկութիւնը հեշտ կատարելի չէր։ Յամենայն դէպս ես բանակցեցի ֆինանսական մինիստրի և «Շարիտէ» հիւանդանոցի հետ։ Ֆինանսական մինիստրի հետ համաձայնութիւն կայացաւ, որ պրուսական պետութեան պատւի պարտականութիւնն է՝ պրոֆ. Կոխին, իւր աշխատանքների համար, պետական միջոցներով նպաստել (մեծ հաւանութիւն)։ Նոյեմբ. 6-ին ծրագիրը վերջնականապէս որոշւեց, ֆինանսական մինիստրը միջոցները տւեց, և ահա մենք գործի սկզբումն ենք։ Նոյեմբ. 7-ին բանակցեցի ես Կոխի հետ իւր գիւտի հրատարակութեան մասին։ Կոխը դեռ այդ ժամանակ դիտաւորութիւն ունէր՝ բոլորը, ինչ գիտէր՝ ազատ և բացարձակ յայտնել։ Բայց շատ երկար խօսակցութիւնից, երկու վկաների առջև, դուրս եկաւ, որ Կոխը առհասարակ այն չէր կարող ասել, ինչ կարող էր երաշխաւորել դեղի վերարտադրութիւնը, (dass Koch überhaupt nicht dasjenige sagen konnte, was eine wirksame Nachbildung des Mittels garantirte)։ Թէև նա կարող էր ասել թէ ինչ նիւթից է պատրաստւում դեղը և մեթոդը նկարագրել, բայց մեթոդը ցոյց տալ անկարելի էր, և սակայն մեթոդը այնքան դժւար է և պատասխանատու, որ նա չի կարող երևակայւել, նա պէտք է աչքով տեսնուի և փորձերով գտնուի. իսկ Կոխը այդ բանը ուսանելու տևողութիւնը վեց ամիս է նշանակում՝ մի փորձւած հետազօտողի համար։

Միւս կողմից վտանգ կար որ դեղը նմանողութեամբ, պատրաստեն՝ առանց նորա ներգործութիւնը ստուգելու։ Մարդկութիւնը կ'ընկնէր կեղծողների ձեռքը, ժամանակը անցկացրած կը լինէր և անվերջ թւով յոյսեր

և մարդկային կեանքեր զոհուած կը լինէին։ Մեր խօսակցութեան վերջում ես Կոխի դիմաց պատասխանատուութիւն վերցրի և այժմ էլ աշխարհքի առաջ նոյն պատասխանատուութիւնը վերցնում եմ, որ ես նորան խնդրեցի, իւր հրատարակութեան մէջ միայն այնքան հեռու դնալ, որ կեղծելու վտանգ չը ներկայացնի (մեծ հաւանութիւն)։

Հրատարակութիւնը [1]) տեղի ունեցաւ նոյեմբերի 13 ին։ Սա մի կարևոր դոկումենտ է և բոլոր ժամանակ անմոռանալի է մնալու։

Աւելի կարևորութիւն ստացաւ դեղը պատրաստելու խնդիրը։ Դեռ վաղորօք, յամենայն դէպս նոյեմբ. 7-ին ես յայտնեցի գաղտնի խորհրդական Կոխին, որ անկարելի է բանը թողնել այնպէս։ Երաշխաւորութիւն չը կար, որ դեղը մեծ քանակութեամբ պատրաստուէր։ Թէ այն ժամանակ և թէ այժմ գործը կատարուում է ընդդիմադործական չիշի մէջ (Reagensglus)։ Այն որ գլխաւորն է, այն է գործի բնագիտական-թէօրիական կողմը՝ մուացութեան է տրուած բժշկական-գործնականի առջև։ Որպէս սոսկ մարդ ես իմ իրաւունքից օգուտ եմ քաղած դատողութիւն կազմելու գործի բնագիտական կողմի մասին և մի երկտողով երէկ ես գաղտնի խորհրդական Կոխին ներկայացրի այն. և նա հաւանութիւն տուեց։ Ոչ մասնագէտի մտքերը միայն համեմատական նշանակութիւն ունին, բայց նոքա կտրելոյն չափ պարզ են։ (Այստեղ մինիստր Գոսլեր կարդում է Կոխին գրած իւր այդ երկտողը)։

«Ես կարծում եմ որ կարող եմ ընդունել որ մի միջոց է գտնուած, որը, եթէ մի կենդանի մարդու մէջ ներս մտցնի, մարդու մէջ գտնուած գործուածքների վերայ շատ մեծ ներգործութիւն է անում, եթէ նոցա մէջ կազմուած է տուբերկուլ-բացիլների մի որոշ տեսակը։ Միջոցը (դեղը) ներգործում է, երբ կայ բացիլի այդ տեսակը։ Ներգործութիւնը կատարուում է նաև, երբ միջոցը գործադրուում է հիւանդացած տեղից հեռու տեղերի վերայ։ Ներգործութիւնը միանգամայն ահագին է և միջապէս ուղղած է տուբերկուլ-բացիլների դէմ։ Ներգործութիւնը չի լինում և կամ կատարուում է թոյլ կերպով այն անձերի վերայ, որոնք տուբերկուլոզ չ'ունեն, և կամ երբ տուբերկուլների ուրիշ տեսակն ունեն։ Ըստ երևոյթին այդ դեղը չի իմացուում այժմեայ օրդանական քիմիայի միջոցով. թւում է թէ նա (դեղը) օրդանական քիմիայի մի մութ ասպարէզի վերայ լոյս էսփռում։ Այն մեթոդը, որով դեղը պատրաստուում է, որպէս նախատեսնուում է, փոխադրելի է այլ վարակիչ հիւանդութիւնների վերայ»։

---

[1]) Այդ այն հրատարակութիւնն է, որ «Կոխի հրատարակութիւնը» խորագրով հաղորդուեց «Մուրճ»-ի ընթերցողներին ամսագրիս 1890 թ. № 12։

Խմբ.

Պրոֆեսոր Կոխը այս տողերին հաւանութիւն տուեց և մասնաւորապէս համաձայնուեց այն կէտին, որ վերաբերում է քիմիային։ Նա կարծիք յայտնեց, որ այս բանը կարող է ուսումնասիրութեանը բոլորովին նոր ձևեր տալ։ Ով բնագիտական խնդիրներով զբաղւում է, իրաւք այս տպաւորութիւնը կ'ունենայ, որ մենք չատ և չատ տասնեակ տարիներ այս գիւտով իշխած ենք լինելու։ Եւ այն՝ ինչով այս գիւտը, որ բնագիտական հողի վերայ է գտնուել՝ բոլոր մեր գիտեցած գիւտերից վեր ի վեր է, այն է որ նա անմիջապէս կարող է գործադրուել պրաքսիսի՝ բժշկականութեան համար։ Դիագնոստական (հիւանդութիւնը ճանաչելու) նշանակութիւնը արդէն այժմ անկասկած է։

Դեռ ևս չեղած բան է, որ մի գաղանի դեղ ամբողջ աշխարհքից, մի միակ անունի (Կոխի) երաշխաւորութեամբ, ընդունուի։ Դեռ ոչ մի մարդ ամբողջ աշխարհում չը գտնուց, որ ասէր՝ թէկուզ Լոբերտ Կոխի անունն էլ մէջը լինի, բայց այդ բանը խաբեբայութիւն է։ (Մեծ հաւանութիւն)։ Կոխը ինքը ամեն կերպ աշխատել է չափազանցութիւնների մէջ չընկնել և ես օրը 12 ժամ այդ մտքով ջանքեր եմ անում։

Բժշկելու փորձերը սակայն պէտք է կլինիկներում և մասնաւոր հիմնարկութիւններում կատարուեն և ոչ պոլիկլինիկներում և կամ ատանդական կերպով։

Կոխի ասելով այս հաստատ է որ մանրագիտական մեթոդի հետ միասին այս դեղը մի նշանակութիւն է ստանալու, որը մեր ամբողջ հասարակաց կեանքը մեծ լեղաշրջման է ենթարկելու։ Մեր ամբողջ կեանքը հիւանդանոցներում, ուսումնարաններում, խնամքի հիմնարկութիւններում և այլն բարերար ազդեցութիւն են ստանալու այս նոր գտնուած մեթոդից։

Վերադառնանք տուբերկուլոզին։ Անասունների հիւանդութիւնները չեն կարող զատուել մարդկային հիւանդութիւններից։ Ցաւարի բարակացաւի (Perlsucht) խնդիրը չատ դժուար խնդիր է։ Ցարիներով Հալլէ'ում կատարուած փորձերը անհետևանք եղան։ Բայց բոլոր հիմունքներ կան մտածելու, որ մարդս կարող է իր խորխով հիւանդացնել անասունին, եթէ նա տուբերկուլներ ունի, և որ ընդհակառակը՝ բարակացաւոտ տաւարի կաթը վտանգաւոր է մարդուս համար։ Ոչ մի բանիմաց բժշկական և առողջաբանական վարչութիւն չի կարող անտարբեր մնալ այս բաներին, և անկարելի չէ, որ այս դեղով գտնուած լինի մի դիագնոզական (հիւանդութիւնը ճանաչելու) միջոց, որը տաւարի տուբերկուլոզը իր սկզբնական շրջաններում ճանաչել կը տայ։ Որովհետև երբ անասունները հազում են և խորխ են դուրս գցում, դորանով սովորական կարելիութիւն է տրւում մեծ դիտաններ հասցնել (Շատ ճիշդ)։

Ինչ է ենթադրած անելու, հայցնում են մեզ, Կոխի բժշկական եղանակը զարգացնելու և օգտակար դարձնելու համար։ Դորա պատաս-

խանը տրուած է փաստերի վերայ հիմնուած իմ այս զեկուցմանս վերայ։ Պէտք է երկու բանը ջոկել 1) միջոցը տուբերկուլոզի դէմ և 2) այն հանգամանքները, որ հարկաւոր են ուրիշ վարակիչ հիւանդութիւնները Կոխի պլանով հետազօտելու համար։ Բայց ահա դեռ մի հարց՝ ումն է իսկապէս պատկանում դեղը, ով է նորա ոգեկան սեպհականատէրը։ Ինձ համար ոչ մի վայրկեան կասկած չի եղել, որ դեղի ոգեկան սեպհականատէրը Կոխն է։ (Հաւանութիւն ժողովի բոլոր նստարաններում)։ Իմ գիտցածով՝ մենք երբէք պրուսական կրթական վարչութեան մէջ կարելի չենք համարել, որ երբ մի ուսուցիչ իւր սեպհական հետազօտական գործունէութեամբ մի միջոց է գտել, լինի այս անիլինի գոյների կամ եթերական իւղերի որ և է ուրիշ ճիւղի նկատմամբ, որ մենք այդ գիւտը պետական գանձարանի սեպհականութիւն համարած լինէինք։ Դորանից բղխում է այս հետևանքը, որ ինձ չի պատկանում պաշտօնական կերպով ներգործել Կոխի դեղի պատրաստելու գործի վերայ։ Բայց մենք շատ շուտով հասկացանք, թէ ինչպէս, չը նայած Կոխի սառնարիւն հետազօտութիւններին, հօսանքը և շփոթութիւնը այնքան մեծ է լինելու, որ դորանից հասարակաց մի չարիք է գոյանալու։ Այդ պատճառով մենք Կոխի հետ համաձայնութիւն կայացրինք, որ առաջ դեղից տրուի մեր (պրուսական և գերմանական) կլինիկներին և հիմնարկութիւններին, ուր թոքախտները խնամւում են գիտնական սկզբունքներով, յետոյ տրուի օտարերկրեայ նոյնանման հիմնարկութիւններին և, ի միջի այլոց, նաև այնպիսի բժիշկներին, որոնց գիտնականութեան համար Կոխը անձնական հաւատ կարող է ունենալ։ Նաև Կոխը նեարդեր ունի, և նա այնպիսի յարձակումների ենթարկուեց, որ իսկապէս նա կարող էր ոստիկանութեան պաշտպանութեան դիմել։ (Ծիծաղ)։ Ես ձեզ կարող կը լինէի պատմել ճնշումների մասին, անգամ կաշառքների մասին մեր կլինիկների ստորին պաշտօնեաների դէմ։ Վրդովեցուցիչ է այդպիսի բաների մասին խօսելը։ Այդ բոլորի դէմն առնելու համար Կոխը իսկոյն դեղից ուղարկեց այն հայրենի և օտարերկրեայ հիմնարկութիւններին, որոնց մէջ թոքախտները մեծ թուով բժշկւում են, որպէս զի հօսանքը դէպի Բերլին թոքախտների կողմից հեռու պահէ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը ինձ օգնեց։ Բոլոր պահանջները ուղղում էին դոքտ. Լիբբերց'ին։ Յետոյ ես պարտքս համարեցի, որ մեր թագաւորական կլինիկներում դեղը գործադրուէր գիտնականօրէն և փորձեր անելով՝ աշխարհքիս գիտնական ընդհանուր սեպհականութիւն դառնար։ Պրուսական թագաւորական կլինիկում այժմ արդէն 70 տուբերկուլ-հիւանդներ կան և այլ. Ֆոն Բերգմանը մտադրութիւն ունի այդ թիւը մինչ 100-ի հասցնելու, որ խիրուրգիական տուբերկուլոզի նկատմամբ կարելիին չափ ամբողջ եզրակացութիւնների հասնելու կարելի լինի։

Բայց տեսէք որ—յայտնի է որ ոչինչ չը կայ այնքան ազնիւ և այն-

քան մաքուր, որ չը կարողանալ կասկածից ազատ մնալ—չեն քաշել հարց դնելու, թէ արդեօք այստեղ խորութիւն չի գնում աղքատ և հարուստի մէջ։ Ես կարող եմ հաստատցնել, որ թաղաւորական կլինիկներում գերադասութիւնը աղքատներին է տրւում։ (Հաւանութիւն)։ Ֆոն Բերգմանը բոլոր ազատ անկողինները տուբերկուլ-հիւանդներին է տուել և գները նշանակւած են օրական ամենաչատը 5 մարկ 50 պֆենիգ (ռուսաց փողով 1 բուբլի 80 կոպէկ ոսկի)։ Նոյնն է բոլոր պրուսական կլինիկներում։ Դերհարդի կլինիկում բոլորը բանւորներ և արհեստաւորներ են (ընդհանուր հաւանութիւն)։ Ակսաեղի կլինիկում ամեն օր փորձեր են կատարում և այսօր անգլիերէն, վաղը ֆրանսերէն դասախօսութիւն է կատարւելու։

Կոխի լիմֆը (հեղուկը) պատրաստում է օգնութեամբ դր. Լիբբերց'ի և գր. Պֆուհլի։ Դոցանից միայն Լիբբերցն է բժշկական պրաքսիսով պարապւում։ Դոքտ. Պֆուհլին չը լսած առաջարկութիւններ են արւած եղել, բայց նա իւր ոյժը ամենից առաջ խիրուրգիական կլինիկին է դոհել։ Ես այստեղ կը միշտակեմ, գնի նկատմամբ, որ 5 խորանարդ սանտիմետր (կամ 5 գրամ) դեղը առնւում է 25 մարկով (մօտ 8 բուբլի 30 կոպ. ոսկի)։ Այդ փոքրիկ սրւակը պարունակում է 500 ներմուծումներ ամենամեծ չափով։ Մեծ մասամբ սակայն միայն 1 միլլիգրամ է տրւում միանգամից։ Ուրեմն, այդ չափով, մի սրւակի մէջ 500 անգամաւ դեղ կայ և իւրաքանչիւրը ուրեմն արժէ կէս պֆենիգ (ծիծաղ)։ (Կէս պֆենիգը ռուսաց փողով մի կոպէկի մօտ տասներորդ մասն է)։ Դուք տեսնում էք, որ գինը արդէն այնքան փոքր է, որ այլ ևս փողով չի լինում նորան որոշել։ Դր. Կորնետը ինձ խնդրել է հաղորդել, որ նա լրագրերում յայտնւած գները չի վերցրած հիւանդներից։ Առաջին բժշկական խորհուրդի համար, երբ նա ամենաղժւար ներքին օրգաններն է հետազօտում, պահանջում է եղել մինչ այժմ 10—30 մարկ (ռուսաց փողով մօտ 3—10 բ. ոսկի)։ Այս գումարները արդէն այնքան փոքր են, որ նա իրաւունք է համարում ապագայում թերևս մի փոքր աւելացնել. բայց նա ինձ առաջ էլ ասել է, որ հարուստներից աւելին վերցրածը նա պարտականութիւն է համարում աղքատների վերայ գործադրել։ Ես ևս կարծել եմ որ ամեն մի լաւ բժշկի պարտքն է՝ որ հարուստից մի փոքր աւելի վերցնի, բայց որ այդ աւելին մարդկութեան օգտին ծառայեցնէ։ (Հաւանութիւն)։ Դր. Կորնետ օրական 50—60 աղքատներ է ընդունում ձրիապէս, և նա վարձատրութիւնը չի պահանջում նոյն իսկ ներմուծութիւնների (ինեկցիա) և գործիքների համար, որ այնքան կոտրատւող են։ (Մեծ հաւանութիւն)։

Երկրորդ կէտը, որի մասին պէտք է խօսենք, այն հիմնարկութեան մասին է, ուր պէտք է դեղը պատրաստւի և որտեղից նա պէտք է ուղարկւի։ Դժւարութիւնը այսօր միայն նորա մէջն է, որ դեռ ևս ոչ մի մեթոդ չը կայ, որով կարելի լինէր դեղը մեծ քանակու-

թեամբ պատրաստել։ Վեց շաբաթ է պահանջւում նորան պատրաստելու համար։ Դր. Լիբբերցը պատրաստում է, իսկ դր. Պֆուհլը նորան քննում է։ Ոչ մի երաշխաւորութիւն չը կայ դեղի ներգործութեան համար, որ նա պարզ ի պարզոյ պատրաստուի և գործադրուի։ Դեղը պատրաստելուց յետոյ, նորան երեք անգամ փորձում են անասունի վերայ. և երբ սպասուած ընդդիմագործութիւնը, Կոխի ցոյց տուած ձևով, չի նկատւում՝ դեղը որպէս անպէտք՝ դէն են գցում։ Կոխը, որը ինձ ամեն ինչ յայտնեց ասաց նաև, որ անկարող է դեղը իւր ձեռքից բաց թողնել, մինչև որ ինքը կոնտրոլ չանի։ Դորա մէջ ահագին դժւարութիւն կայ։

Իսկ միւս դժւարութիւնը դեղը բաժանելու մէջն է։ Արդ ես կարող եմ ձեզ արդէն յայտնել ուրախութիւնս, որ երկար բանակցութիւններից յետոյ Կոխի հետ, ես արդէն մի հիմքի եմ հասել, որը տանում է դէպի դեղի պետականացումը (այսինքն որ դեղը դառնայ պետութեան սեփականութիւն։ (Ընդհանուր հաւանութիւն)։ Մենք չենք հագստանալու մինչև որ պետութիւնը իւր ձեռքը չ'առնի այդ դեղը։ Եթէ մինչև անգամ մեզ անկարելի լինի դեղը այնքան շուտով մեծ քանակութեամբ պատրաստել, գոնէ կարծում եմ որ ամբողջ աշխարհքում հանգստութիւն կը լինի, եթէ Պրուսական պետութիւնը իւր ֆիրման այդ բանի ներքոյ դնէ։ (Ընդհանուր հաւանութիւն)։

Գործը այնքան էլ հեշտ չէ։ Ֆաբրիկացիայի մէջ ղանազանութիւն չի լինիլ, բայց զանազանութիւն կը լինի ծախելու գործի մէջ։ Հարկաւոր կը լինի մի վարչական օրգան ստեղծել, որի գործը կը լինի դեղը ուղարկել և բաժանել։ Ուղղութիւնը ի հարկէ կենտրոնից պէտք է տրուի։ Հասարակութեանը և ամբողջ աշխարհին պէտք է ապահովութիւն տրուի, որ այդ վարչութիւնը ոչինչ ընդհանուր չունի ֆինանսական և նման դիտաւորութիւնների հետ. (Մեծ հաւանութիւն։) Ապագայում գուցէ գործը այնպէս փոփոխուի որ մենք մի քանի ուժեր ևս ընդունենք. յետոյ կը գայ ժամանակ, որի մասին ես կասկած չունիմ, որ Կոխը նոր միջոցներ (դեղեր) կը գտնի ուրիշ վարակիչ հիւանդութիւնների համար և, փորձերից յետոյ, այս նորաստեղծ հիմնարկութեանը կը յանձնի նոցա՝ ֆաբրիկացիայի համար։

Կոխը ցանկանում է, որ իւր դեղի պատրաստումը ապակենտրոնանայ, բայց նա ուզում է որ դա կապուած մնայ գոյութիւն ունեցող մեծ հիմնարկութիւնների հետ և որ այդ հիմնարկութիւնների մէջ մի բաժանմունք լինի, որը կատարէ այն մեծ առողջաբանական գործը, որ նա իրան նպատակ է դրել։ Այդ բաժանմունքներին պէտք է որքան կարելի է միանան պոլիկլինիկները, որպէս նաև այն բժիշկները, որոնք ամբուլանտորական պրաքսիսով են բժշկում իրանց հիւանդներին. և յամենայն դէպս կենտրոնական տեղերում պէտք է հիմնարկութիւններ լինեն աղքատներին ձրի ընդունելու համար։

Այժմ խնդիրը սորանումն է, թէ ինչ պէտք է լինի վարակիչ հի-

ւանդութիւնների ինստիտուտը։ Նա ունենալու է երկու բաժանմունք՝ մէկը հիւանդների համար, միւսը կը լինի գիտական բաժանմունք։ Հիւանդների բաժանմունքում պէտք է լինին այն բոլոր վարակիչ հիւանդութիւնները, որ Կոխի հետազօտութիւնների համար հարկաւոր են։ Գիտական բաժանմունքում նա ուզում է քննել իւր բոլոր նախատեսած դէպքերը։ Այդ ինստիտուտը ուզում ենք չինել քաղաքային երկաթուղու (Stadtbahn) և այդպէս կոչուած նոր Շարիէ՛ի մէջ տեղ։ Այստեղ պէտք է փոքրիկ տներ չինուեն բնակութեան համար, ուր ընդունելին հիւանդները և կերակրուեն. և մի փոքրիկ լսարան կը չինուի այնտեղ մինչ 50 հոգու համար։ Նոցա երկու կողմերից կը չինուին երկու մեծ և երկու փոքրիկ բարակներ, մի կողմը՝ կանանց, միւս կողմը՝ տղամարդկանց համար։ Նաև բնակութեան տներ կը չինուին սպասաւորների և խնամողների համար և այլն։ Գիտութեան բաժանմունքը մի չինութիւն կը լինի, որը գրեթէ միայն պատուհաններից կը լինի բաղկացած, որ ամեն մի միկրոսկոպիստ իւր համար առանձին պարապել կարողանայ։ Գործի գլուխ կանգնած կը լինի պրոֆ. Կոխը. Նորա ներքոյ երկու բաժինների ղեկավարներ՝ հիւանդների և գիտութեան բաժանմունքների համար։ Շինութիւնները կը նստին կէս միլիոն մարկ և կոնտրակտները արդէն կապուած են։ Մինչ այս մինչ այն չինութիւնների ինսպեկտոր Բօտխէր ուղարկուում է Պարիզ, Պաստեօրի ինստիտուտը այցելելու համար, ուր նա ապահովապէս կը գտնի գլխաւոր հիմունքները՝ գիտական բաժանմունք օրգանիզացեայի համար»։—

Մինիստր ֆոն Գոսլեր՛ի ճառի շարունակութիւնից մենք կը հաղորդենք այն, որ, պետական դանձարանից դուրս, գործին աջակցելու առաջարկութիւններ են արել թէ Բերլին քաղաքը և թէ մասնաւոր բարեգործները։ Բերլինը պահպանելու է իւր հաշուով 150 անկողին ուղքատների համար։ Մասնաւոր բարեգործներից մէկը արդէն Կոխին գրել է, թէ մի միլիոն մարկ է տալիս, որ Կոխի ղեկավարութեան ներքոյ գանուելիք մի հիւանդանոց չինուի թոքախտների համար։ Այժմ բանակցութիւններ են անուում մինիստրութեան և Բերլին քաղաքի միջև, որ քաղաքը մի նոր հիւանդանոց չինի մի առանձին սանատորիումով։ Միւս քաղաքներն էլ և բարեգործները, մինիստրը չէս ունի, կը հետեւեն այդ օրինակներին։

Վերջացնենք—հաղորդելով այս շատ կարեւոր լրողութիւնը, որ և մինիստր Գոսլերը հարկաւոր համարեց իւր ճառի վերջում հաղորդել, որ «Կոխը հաստատացնում է թէ բոլոր մարդկանց հօթներորդ մասը Տուբերկուլոզից է մեռնում»։—